ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 111-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 7-ի նիստի օրակարգը՝

1.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:/ՀԵԿ.՝ ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

2.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ՀԵԿ.՝ ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

3.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ՀԵԿ.՝ ՆՎԱՐԴ ՍԱՀԱԿՅԱՆ/

4.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ՀԵԿ.՝ ՎԻՏՅԱ ԱԶԱՏԽԱՆՅԱՆ/

5.ԷԴԳԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ՀԵԿ.՝ ՎԻՏՅԱ ԱԶԱՏԽԱՆՅԱՆ/

6.«ՄԱՔՈՒՐ ՄԱՍԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: /ՀԵԿ.՝ ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Պապիկ	Աբգարյան			
2	Վաչագան	Աբգարյան			
3	Արսեն	Եղիազարյան			
4	Սամվել	Հովհաննիսյան			
5	Արման	Ղազարյան			
6	Էդվարդ	Մարգարյան			
7	Արմեն	Մարտիրոսյան			
8	Աբրահամ	Շահվերդյան			
9	Սարգիս	Ռաֆայելյան			
10	Գարիկ	Սավադյան			
11	Էդմոնդ	Ստեփանյան			
12	Վահան	Վարդանյան			
13	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 112-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի,13-րդ,14-րդ հոդվածների, ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով. Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր

մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի

գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան մեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ չորս հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար ՝ երեք հարյուր յոթանասուն հինգ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար ՝հարյուր հիսուն դրամ.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման

գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2.Սույն որոշման 1-ին մասի 4-15-րդ կետերի դրույքաչափերին կիրառել 0.5 գործակից:

3.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի 2018 թվականի տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հինգ հազարդրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տասը հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տասը հազար դրամ.

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տասը հազար դրամ.

5) համայնքի սեփականություն հանդիսացող մեկ հենասյունի օգտագործման /բնակչությանն ինտերնետ և այլ կապով ապահովելու նպատակով մալուխ անցկացնելու համար/ ամսական վճար՝ հարյուր հիսուն դրամ.

6) աղբահանության վճար՝ կենցաղային աղբի համար.

ա/ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսական վճար հարյուր ութսուն դրամ:

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի ՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ/ առևտրի /այդ թվում շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ/ ամսական երեսունհինգ դրամ մեկ քառակուսի մետրի համար,

գ/ հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ ամսական տասնհինգ դրամ մեկ քառակուսի մետրի համար,

դ/ արտադրական, արդյունաբերական գրասենյակային նշանակության շինություններ ամսական վեց դրամ մեկ քառակուսի մետրի համար,

ե/ կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ ամսական երեք դրամ մեկ քառակուսի մետրի համար:

6) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար տասը հազար դրամ:

7) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար օրական երեք հարյուր դրամ:

8) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի.

-Երաժշտական դպրոց՝ ամսական չորս հազար հինգ հարյուր դրամ

-Գեղարվեստի դպրոց՝ ամսական չորս հազար դրամ:

4.Համայնքին սեփականության իրավունքով պատկանող Մասիս քաղաքի Երիտասարդական փողոցի 1-ին նրբանցքի թիվ 11 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող մարզադաշտի /մարզական միջոցառումներ կազմակերպելու նպատակով/վարձակալության վճար սահմանել օրական 4600 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Պապիկ	Աբգարյան			
2.	Վաչագան	Աբգարյան			
3.	Արսեն	Եղիազարյան			
4.	Սամվել	Հովհաննիսյան			
5.	Արման	Ղազարյան			
6.	Էդվարդ	Մարգարյան			
7.	Արմեն	Մարտիրոսյան			
8.	Աբրահամ	Շահվերդյան			
9.	Սարգիս	Ռաֆայելյան			

10.	Գարիկ	Սավադյան			
11.	Էդմոնդ	Ստեփանյան			
12.	Վահան	Վարդանյան			
13.	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 113-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով ֆինանսական բաժնի պետի հաղորդումը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. 2017 թ. ֆոնդային բյուջեում համայնքի սեփականություն համարվող հողերի իրացումից եկամուտները ավելացնել 2774.5 հազար դրամով:

2. 2017 թ. Ֆոնդային բյուջեի ծախսերը՝ 2774.5 հազար դրամ գումարի չափով բաշխել համաձայն հավելված 1-ի:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

		Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.Պապիկ	Աբգարյան			
2.Վաչագան	Աբգարյան			
3.Արսեն	Եղիազարյան			

4.Սամվել	Հովհաննիսյան			
5.Արման	Ղազարյան			
6.Էդվարդ	Մարգարյան			
7.Արմեն	Մարտիրոսյան			
8.Աբրահամ	Շահվերդյան			
9.Սարգիս	Ռաֆայելյան			
10.Գարիկ	Սավադյան			
11.Էդմոնդ	Ստեփանյան			
12.Վահան	Վարդանյան			
13.Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Հավելված 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
,,07,, 12 ,,2017թ. ԹԻՎ,,113-Ա, ՈՐՈՇՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2017 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի բաշխում

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Հիմնարկ, ձեռնարկության անվանումը*	*հոդված*	*Գումարի չափը /հազար դրամ/*
1	01	1	1	Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի 4-րդ հարկի միջանցքի և աշխատասենյակների հիմնանորոգման նախահաշվային աշխատանքներ	5134	156.0
2	04	3	2	Գրադարան ՀՈԱԿ-ի գազատարի իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	125.0
3	04	5	1	Մասիս քաղաքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաթեթ	5134	225.0
4				2-րդ դպրոց տանող մայթի իրականացման և ասֆալտապատման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	175.0
5	06	3	1	Մասիս Կայարանի թթ. 9,15,17 շենքերի և Մասիս քաղաքի թ. 4-րդ մանկապարտեզի կոյուղագծերի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	156.0
6				Մասիս քաղաքի թ. 40 հանրակացարանի խմելու ջրագծի անցկացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	40.0
7	06	4	1	1-3 փողոցների և բազմ. շենքերի բակերի լուսավորության համակարգի անցկացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	287.5
8				Մասիս քաղաքի փողոցների լուսավորման հենասյուների տեղադրման աշխատանքներ	5112	1000.0
9	08	1	1	Տաղավարների կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	40.0
10				5-րդ ավագ դպրոցի հարակից հողամասի (խաղադաշտի) ցանկապատի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	125.0
11	09	8	1	Մարզադպրոցի նախկին շենքի Գրադարան և ՄՊՍԿ ՀՈԱԿ-ների մասնաշենքերի ջեռուցման համակարգի անցկացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	315.0
12	09	8	1	Թիվ 5 մանկապարտեզի շենքի սյուների նորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	130.0

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 114-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ելնելով անհրաժեշտությունից՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 28-ի «Լևոն Մուրադյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած հողատարածքի օտարման թույլտվություն տալու մասին» N 78-Ա որոշման 1-ին կետում գրառված «14/27» թիվը փոխարինել «14/25» թվով:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Պապիկ	Աբգարյան			
2	Վաչագան	Աբգարյան			
3	Արսեն	Եղիազարյան			

4	Սամվել	Հովհաննիսյան			
5	Արման	Ղազարյան			
6	Էդվարդ	Մարգարյան			
7	Արմեն	Մարտիրոսյան			
8	Աբրահամ	Շահվերդյան			
9	Սարգիս	Ռաֆայելյան			
10	Գարիկ	Սավադյան			
11	Էդմոնդ	Ստեփանյան			
12	Վահան	Վարդանյան			
13	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 115-Ա

ԷԴԳԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հաշվի առնելով Էդգար Ստեփանյանի ավանդը սպորտի բնագավառում / ՀՀ միջազգային կարգի սպորտի վարպետ, 2014թ. երիտասարդների աշխարհի առաջնության 3-րդ տեղ, 2015թ. երիտասարդների աշխարհի առաջնության 2-րդ տեղ, 2015թ. երիտասարդների Եվրոպայի Չեմպիոն, 2017թ մեծահասակների աշխարհի Գավաթի փոխչեմպիոն/ և ընդառաջելով Էդգար Գևորգի Ստեփանյանի խնդրանքին՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

Էդգար Գևորգի Ստեփանյանին /ծնված 01.01.1997թ անձնագիր AP0663511 տրված 12.12.2016թ. 001 կողմից/ նվիրատվության պայմանագրով օտարել Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ք. Մասիս 5-րդ թաղամաս 2-րդ փող. թիվ 2/1 հասցեում գտնվող բնակավայրերի խառը կառուցապատման 0.0139 հա և բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.0266 հա /ծածկագիր՝ 03-003-0773-0002, 03-003-0158-0004 վկայական N 27012017-03-0038/ հողամասը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Պապիկ	Աբգարյան			
2	Վաչագան	Աբգարյան			
3	Արսեն	Եղիազարյան			
4	Սամվել	Հովհաննիսյան			
5	Արման	Ղազարյան			
6	Էդվարդ	Մարգարյան			
7	Արմեն	Մարտիրոսյան			
8	Աբրահամ	Շահվերդյան			
9	Սարգիս	Ռաֆայելյան			
10	Գարիկ	Սավադյան			
11	Էդմոնդ	Ստեփանյան			
12	Վահան	Վարդանյան			
13	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 116-Ա

«ՄԱՔՈՒՐ ՄԱՍԻՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով՝**Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Մաքուր Մասիս» փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակը, պաշտոնային դրուքաչափերը, կառուցվածքը և աշխատողների քանակը համաձայն հավելված 1-ի:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

			Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Պապիկ	Աբգարյան			
2	Վաչագան	Աբգարյան			
3	Արսեն	Եղիազարյան			

4	Սամվել	Հովհաննիսյան			
5	Արման	Ղազարյան			
6	Էդվարդ	Մարգարյան			
7	Արմեն	Մարտիրոսյան			
8	Աբրահամ	Շահվերդյան			
9	Սարգիս	Ռաֆայելյան			
10	Գարիկ	Սավադյան			
11	Էդմոնդ	Ստեփանյան			
12	Վահան	Վարդանյան			
13	Գեղամ	Փահլևանյան			

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Հավելված 1

Մասիս քաղաքային համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 7-ի թիվ 116-Ա որոշման

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի «Մաքուր Մասիս» ՓԲԸ-ի հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը, կառուցվածքը և աշխատողների քանակը

Աշխատողների քանակը՝ 7

N	հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	դրույքաչափը
1	Տնօրեն	1	100.000
2	Հաշվապահ	1	90.000
3	Օպերատոր	2	85.000
4	Հավաքագրող պայմանագրային աշխատողներ	3	հավաքագրված գումարի 10%-ի չափով

Աշխատանքային ռեժիմը՝ շաբաթական 5 օր, 8 ժամյա

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Խ.Խաչատրյան